ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 186

«19» 11 2012թ.

ք. Արտաշատ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, 1.10 կետի դ) ենթակետով,**

Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանն աջակցելու, համայնքների նորընտիր ղեկավարներին և ավագանիներին օրենքով վերապահված լիզորություններին ծանոթացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Հավելված
Արարատի մարզպետի
2012թ. նոյեմբերի 19-ի
№ 186 կարգադրություն

КАЗМ

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Լալայան Ալինա - Տեղական Ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ

Բաբայան Սուսաննա - Իրավաբանական բաժնի պետ

Մանուկյան Մովսես - Սոց. տնտ. զարգացման վարչության ֆինանսատնտես. բաժնի առաջատար մասնագետ

Սարգսյան Աշոտ - Քաղաքաշինության և տրանսպորտի վարչության ճարտարապետաշինար. բաժնի առաջատար մասնագետ

Միսակյան Ոսկան - Հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 187

<<19>> <<11>> 2012թ.                    ք. Արտաշատ

## ԱՂՈՒՆԻԿ ԲԵՆԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով

2012թ. նոյեմբերի 19-ից Աղունիկ Բենիկի Բաբայանին ազատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականություններից:

ՄԱՐԶՊԵՏ՝                    Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 188

<<19>> <<11>> 2012թ. ք. Արտաշատ

## ԱՂՈՒՆԻԿ ԲԵՆԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջով.

Մինչև <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակվելը 2012 թվականի նոյեմբերի 19-ից այդ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Աղունիկ Բենիկի Բաբայանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 189

<<21>> <<11>> 2012թ. ք. Արտաշատ

## ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՆԻԿԻ ԵՓՐԵՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության>> կարգի 29-րդ կետով, հիմք ընդունելով << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2012թ. նոյեմբերի 14-ի որոշումը.

2012թ. նոյեմբերի 22-ից Սուսաննա Վանիկի Եփրեմյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 190

<<22>> <<11>> 2012թ. ք. Արտաշատ

## ԼԻԼԻԱ ԱԼԲԵՐՏԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով

2012թ. նոյեմբերի 23-ից Լիլիա Ալբերտի Շահբազյանին ազատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականություններից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 191

<<22>> <<11>> 2012թ. ք. Արտաշատ

ԼԻԼԻԱ ԱԼԲԵՐՏԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա., ենթակետի պահանջով.

Մինչև <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արամ և Հաամիկ Կարամանուկյանների անվան Այնթապի N1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակվելը 2012 թվականի նոյեմբերի 23-ից այդ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Լիլիա Ալբերտի Շահբազյանին:

ՄԱՐԶՊԵՏ' Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 192

<<26>> <<11>> 2012թ.

ք. Արտաշատ

ՎԵՐԳՈՒՇ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության>> կարգի 29-րդ կետով, հիմք ընդունելով << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2012թ. նոյեմբերի 20-ի որոշումը.

2012թ. նոյեմբերի 26-ից Վերգուշ Կարապետի Առաքելյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРАРАТА

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N--------193--------

ք. Արտաշատ

<--27--> -----11----- 2012թ.

## ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԹԱՓՈՒՐ ՄՆԱՑԱԾ ԵՐԹՈՒՂՈՒ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգով.

1. 2012 թ. նոյեմբերի 8-ին կայացած մրցույթի արդյունքում թափուր մնացած 02-025 <<Մասիս-Հովտաշատ>> ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև նոր մրցույթի անցկացումը՝ 2013թ. ապրիլի 26-ը, ժամանակավորապես հատկացնել <<Էջմիածնի ԲՈՒԱՏ>> ԲԲԸ-ին:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 194

<<27>> << 11 >> 2012թ. ք. Արտաշատ

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-կետի պահանջով՝

1. Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում 2012թ. նոյեմբերի 27– ից մինչև դեկտեմբերի 10–ը ներառյալ իրականացնել պետական գնումների շրջանակում, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով սննդամթերքի ձեռքբերման և սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրություն:
2. Հաստատել ուսումնասիրություն իրականացնող խմբի կազմը համաձայն հավելվածի:
3. Կարգադրության կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ս.Մինասյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի 27/ 11 /2012թ.
N 1194 կարգադրության

ՀԱՎԵԼՎԱԾ

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վիոլետա Ալոյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

Հայկ Բաղալյան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ

Մովսես Մանուկյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Արմինե Զամալյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոնի բժիշկ հիգիենիստ (համաձայնությամբ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արարատի մարզպետի
2012թ. նոյեմբերի ....27.....
N ..19.Կ կարգադրության

Ցանկ

2012թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 10-ը ուսումնասիրության ենթակա նախադպրոցական հաստատությունների

| Հ/Հ | Համայնքը,մանկապարտեզի անվանումը,համարը | Նախագծով նախատեսված տեղերի թիվը | Նախագծային հզորությունը խմբերով | Փաստացի խմբերի թիվը | Երեխաների թիվը | 5-6 տարեկան երեխաների թիվ | Տնօրենի ազգանուն, անուն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արտաշատ ք.N1 | 300 | 12 | 6 | 132 | 48 | Մարգարյան Մարիամ |
| 2 | Արտաշատ ք.N3 | 300 | 12 | 5 | 130 | 53 | Հակոբյան Նարինե |
| 3 | Արտաշատ ք.N4 | 300 | 12 | 6 | 179 | 66 | Ղազարյան Ասյա |
| 4 | Արտաշատ ք.N5 | 250 | 10 | 6 | 181 | 70 | Մարգ արյան Շուշան |
| 5 | Արտաշատ ք.N8 | 100 | 4 | 4 | 110 | 33 | Թադևոսյան Նարինե |
| 6 | Այգեստան | 150 | 6 | 3 | 75 | 30 | Վարդանյան Լիանուշ |
| 7 | Մխչյան | 90 | 3 | 3 | 102 | 37 | Աբրահամյան Մերի |
| 8 | Վ.Արտաշատ | 100 | 4 | 4 | 100 | 35 | Պողոսյան Սվետա |
| 9 | Գետազատ | 50 | 2 | 2 | 55 | 14 | Վարդանյան Սուսաննա |
| 10 | Արարատ ք N1 | 300 | 12 | 1 | 120 | 45 | Խուրշուդյան Կարինե |
| 11 | Արարատ ք N2 | 300 | 12 | 6 | 180 | 63 | Տիգրանյան Լենա |
| 12 | Արարատ ք N3 | 150 | 6 | 4 | 120 | 65 | Թադևոսյան Լոլիտա |
| 13 | Տափերական | 150 | 6 | 4 | 97 | 30 | Իսրայելյան Ռուզաննա |
| 14 | փ. Վեդի | 300 | 12 | 4 | 126 | 35 | Ասատրյան Ալվարդ |
| 15 | Վանաշեն | 150 | 6 | 3 | 70 | 23 | Հակոբյան Թագուհի |
| 16 | Մասիս ք N1 | 350 | 14 | 3 | 70 | 23 | Սարգսյան Աննա |
| 17 | Մասիս ք N2 | 325 | 11 | 3 | 70 | 33 | Բեգոյան Աննա |
| 18 | Մասիս ք N3 | 300 | 12 | 8 | 195 | 54 | Կարապետյան Արմինե |
| 19 | Մասիս ք N4 | 200 | 8 | 5 | 115 | 46 | Ավագյան Ջուլիետա |
| 20 | Մասիս ք N5 | 350 | 14 | 4 | 95 | 32 | Ղազարյան Անննան |
| 21 | Մասիս ք N7 | 100 | 4 | 2 | 45 | 17 | Գալաջյան Ալվարդ |
| 22 | Դարակերտ | 75 | 3 | 3 | 82 | 26 | Դաշյան Նորա |
| 23 | Հովտաշատ | 100 | 4 | 3 | 90 | 28 | Մկրտչյան Համեստ |
| 24 | Նոր Խարբերդ | 75 | 3 | 3 | 120 | 40 | Ղարիբյան Նելլի |
|  | 24 |  | 192 | 95 | 2659 | 946 |  |

Աշխատակազմի ղեկավար՝ / Ա.Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 195

«28» 11 2012թ.

ք. Արտաշատ

## ՌԱՖԱՅԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռաֆայել Մկրտչյանին թույլատրել օգտվելու 2012 թվականի ամենամյա արձակուրդի 12 աշխատանքային օրից՝ ս/թ դեկտեմբերի 17-ից հունվարի 9-ը ներառյալ:

2.Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 196

ք. Արտաշատ

« 29 » 11 2012թ.

## ՌԱՖԱՅԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռաֆայել Մկրտչյանի 2012 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործած 12 աշխատանքային օրը տեղափոխել 2013 թվական:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 197

« 29 » 11 2012թ.

ք. Արտաշատ

## ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Աշոտ Վարդանյանի 2012 թվականի ամենամյա չօգտագործած արձակուրդը տեղափոխել 2013 թվական:

2.Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ